ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-499-23.04.2014,12.06.2014-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 74-րդ հոդվածի.

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Դատավորների ընդհանուր ժողովը ձեւավորում է էթիկայի եւ կարգապահական հարցերի, ուսումնական հարցերի, ինչպես նաև դատավորների գնահատման հանձնաժողովները».

2. 5-րդ մասում լրացնել նոր նախադասություններ հետևյալ բովանդակությամբ.

«Նախկին դատավորը կամ իրավաբան գիտնականը կարող է առաջադրվել որպես գնահատման հանձնաժողովի անդամ Դատավորների ընդհանուր ժողովի որևէ մասնակցի կողմից: Գնահատման հանձնաժողովի իրավաբան գիտնական անդամ կարող է առաջադրվել այն անձը, ով ունի գիտաուսումնական կազմակերպություններում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն 3 տարվա աշխատանքի փորձ:».

3. 7-րդ մասում՝

1) 1-ին նախադասությունում «3-րդ և 4-րդ» բառերը փոխարինել «3-րդ, 4-րդ և 4.1-րդ» բառերով, «դատարանների» բառից հետո լրացնել «(գնահատման հանձնաժողովի դեպքում՝ նաև ըստ նախկին դատավորների և իրավաբան գիտնականների)» բառերով,

2) 2-րդ նախադասությունում «դատավորների» բառից հետո լրացնել «(գնահատման հանձնաժողովի դեպքում՝ նաև նախկին դատավորների և իրավաբան գիտնականների)» բառերը,

3) լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Մեկ թեկնածու առաջադրվելու դեպքում նա համարվում է ընտրված ձայների կեսից ավելին ստանալու դեպքում»:

Հոդված 2. Օրենսգրքի 74-րդ հոդվածում լրացնել 4.1, *4.2, 4.3 և 4.4* մասեր հետևյալ բովանդակությամբ՝

«4.1. Դատավորների գնահատման հանձնաժողովի (այսուհետ՝ գնահատման հանձնաժողով) կազմում ընդգրկվում են 5 անդամներ՝ *մեկը՝ իրավաբան գիտնական, մեկը՝* նախկին դատավոր, որի պաշտոնավարումը դատավորի պաշտոնում դադարել է պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով, մեկը՝ առաջին ատյանի դատարանների դատավորներից, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ վճռաբեկ դատարանի դատավորներից:

4.2. Գնահատման հանձնաժողովի անդամի թեկնածուն պետք է ունենա դատավորի պաշտոնում առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ և գործունեության գնահատման վերջին արդյունքներով՝ բարձր կամ լավ գնահատական:

4.3. Դատարանների նախագահները և Արդարադատության խորհրդի անդամները չեն կարող ընդգրկվել գնահատման հանձնաժողովի կազմում:

4.4. Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովի անդամը չի կարող միաժամանակ ընդգրկվել Դատավորների ընդհանուր ժողովի մեկ այլ հանձնաժողովի կազմում:»:

Հոդված 3. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) դատավորի գործունեության գնահատման արդյունքների վերաբերյալ որոշումների պատճենները.»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել 12.1 գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

« ԳԼՈՒԽ 12.1. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հոդված 96.1. Դատավորների գործունեության գնահատումը

1. Դատավորների գործունեությունը, պաշտոնում նշանակման օրվան հաջորդող երկրորդ տարվանից հետո, ենթակա է պարբերաբար գնահատման:

2. Դատավորների գործունեության գնահատման նպատակն է՝

1) բացահայտել և դատավորներին մատնանշել իրենց աշխատանքի արդյունավետությունը բարելավելու ուղիները,

2) նպաստել դատավորների կողմից իրենց գործունեության վերլուծությանը,

3) դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները կազմելիս նպաստել լավագույն թեկնածուների ընտրությանը:

3. Դատավորների գործունեության գնահատումը *իրականացնում է* գնահատման հանձնաժողովը:

4. Դատարանների նախագահների խորհուրդը սահմանում է դատավորների գործունեության գնահատման կարգը, ժամանակացույցը, մեթոդաբանությունը և ինքնագնահատման թերթիկի ձևը:

5. Դատական դեպարտամենտը յուրաքանչյուր տարի քանակական չափանիշներին վերաբերող անհրաժեշտ տվյալները ուղարկում է դատավորին և գնահատման հանձնաժողովին:

Հոդված 96.2. Դատավորների գործունեության գնահատման չափանիշները

1. Դատավորների գործունեության գնահատումն իրականացվում է քանակական և որակական չափանիշների հիման վրա:

2. Քանակական չափանիշների հիման վրա դատավորների գործունեության գնահատումն անցկացվում է յուրաքանչյուր տարի՝ գործերի կառավարման ավտոմատացված համակարգի միջոցով, որը վարում է դատական դեպարտամենտը:

3. Որակական չափանիշների հիման վրա դատավորների գործունեության գնահատումն անցկացվում է գնահատման ժամանակահատվածում ընգրկված *չորս* տարիների տվյալների հիման վրա:

4. Գնահատումն անցկացվում է սկսած գնահատման ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվանից:

5. Ըստ քաղաքացիական, քրեական և վարչական գործերի դատավորների գործունեության գնահատման քանակական չափանիշներն են՝

1) դատավորի աշխատանքային ծանրաբեռնվածությունը և քանակական կատարողականությունը,

2) ըստ գործերի առանձին տեսակների գործերի քննության միջին տևողությունը (հաշվարկի միավոր՝ օր),

3) դատավորի կողմից դատավարական *առանձին գործողությունների կատարման համար օրենքով սահմանված* ժամկետների պահպանումը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ դատավորի աշխատանքային ծանրաբեռնվածությունը և քանակական կատարողականությունը գնահատվում է դատավորի անհատական աշխատանքային ծանրաբեռնվածության գործակցով: Այդ գործակիցը որոշվում է տարվա ընթացքում դատավորի անհատական քանակական կատարողականի գործակիցը բաժանելով տարվա համար դատարանի միջին քանակական կատարողականի գործակցին՝ ըստ դատավորների մասնագիտացման, իսկ վճռաբեկ դատարանում՝ ըստ պալատների:

7. Տարվա ընթացքում դատավորի անհատական քանակական կատարողականի գործակիցը որոշվում է տարվա ընթացքում դատավորի կողմից ավարտված բոլոր գործերի քանակը բաժանելով չավարտված գործերի քանակին: Չավարտված գործերի քանակը որոշվում է նախորդ տարվանից փոխանցված գործերի քանակը գումարելով տարվա ընթացքում դատավորին հանձնված բոլոր նոր գործերի քանակին: Փոխանցված և հանձնված գործերի թվում չեն *հաշվարկվում* տարվա ընթացքում կասեցված գործերը:

8. Տարվա համար դատարանի միջին քանակական կատարողականության գործակիցը որոշվում է տարվա ընթացքում դատարանի դատավորների կողմից ավարտված գործերի քանակը բաժանելով չավարտված գործերի քանակին: Չավարտված գործերի քանակը որոշվում է նախորդ տարվանից փոխանցված (բոլոր դատավորների մոտ *առկա*) գործերի քանակը գումարելով տարվա ընթացքում դատարան ներկայացված գործերի քանակին: Փոխանցված և հանձնված գործերի թվում չեն *հաշվարկվում* տարվա ընթացքում կասեցված գործերը:

9. Սույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ գործի քննության միջին տևողությունը գնահատելու համար Դատարանների նախագահների խորհուրդը սահմանում է գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետներ՝ ըստ քաղաքացիական, քրեական և վարչական գործերի առանձին տեսակների և բարդության, *իսկ սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված չափանիշի հաշվարկման կարգը սահմանում է Դատարանների նախագահների խորհուրդը:*

10. Դատավորների գործունեության գնահատման որակական չափանիշներն են.

1) Դատական ակտերի պատճառաբանման կարողությունը, մասնավորապես՝

ա) դատական ակտերի կառուցվածքին ներկայացվող պահանջները պահպանելը,

բ) դատական ակտի հստակությունը,

գ) գրավոր խոսքի մատչելիությունը,

դ) վերլուծական հմտությունները,

ե) դատական ակտի եզրափակիչ մասի որոշակիությունը.

2) Մասնագիտական կարողությունները՝

ա) դատավարության մասնակիցների նկատմամբ անկողմնակալ վերաբերմունքը,

բ) ինքնատիրապետումը պահպանելու կարողությունը,

գ) դատական նիստը վարելու հմտությունները.

3) Կազմակերպչական հմտությունները՝

ա) *արդարադատության արդյունավետությանն ուղղված* նպատակներ սահմանելու և դրանց հասնելու *համար* մարդկային ու նյութական ռեսուրսները կազմակերպելու ունակությունը,

բ) գործընկեր դատավորների և դատական ծառայողների հետ հարաբերությունների պատշաճ մակարդակն ապահովելու ունակությունը:

11. Վերաքննիչ և վճռաբեկ դատարանի դատավորի գործունեությունը գնահատելիս հաշվի են առնվում կոլեգիալ կազմով քննվող այն գործերը, որոնցում նա հանդես է եկել որպես զեկուցող: Եթե կոլեգիալ կազմով քննվող գործով դատավորը ներկայացրել է հատուկ կարծիք, ապա նրա գործունեությունը սույն հոդվածի 10-րդ մասի 1-ին կետով սահմանված չափանիշներով չի գնահատվում:

12. *Կոլեգիալ կազմով գործերի քննության դեպքում* սույն հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված չափանիշով գնահատվում է բացառապես կոլեգիալ կազմով քննված գործերով դատական նիստը նախագահողը:

13. Յուրաքանչյուր դատավոր քանակական և որակական չափանիշների հիման վրա իրականացնում է ինքնագնահատում *գնահատման ժամանակահատվածում ընգրկված չորս տարիների տվյալների հիման վրա*:

14. Որակական չափանիշներով գնահատման համար հանձնաժողովը պետք է հաշվի առնի՝ դատավորի կողմից քննված գործերի առնվազն 10 դատական նիստի ձայնային արձանագրություններ (բացակայության դեպքում՝ պարզ թղթային արձանագրություններ) և առնվազն 10 գործն ըստ էության լուծող դատական ակտեր (պատահական ընտրությամբ):

15. Գնահատման ընդհանուր արդյունքներում դատավորի գործունեության գնահատման որակական չափանիշները *պետք է առնվազն քսան տոկոսով գերակայեն քանակական չափանիշների նկատմամբ:*

Հոդված 96.3. Դատավորների գործունեության գնահատման արդյունքների ամփոփումը

1. Ինքնագնահատման թերթիկը ստանալու օրվան հաջորդող երեք շաբաթվա ընթացքում դատավորը գնահատման հանձնաժողով է ներկայացնում լրացված ինքնագնահատման թերթիկ:

2. Դատավորի ինքնագնահատման թերթիկի և ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված՝ սույն օրենսգրքի *96.1-րդ հոդվածի 5-րդ մասով և* 96.2-րդ հոդվածի 14-րդ մասերով

նախատեսված տվյալների հիման վրա գնահատման հանձնաժողովը *իրականացնում է դատավորների գործունեության գնահատում:*

3. Դատավորների գործունեության գնահատման ընդհանուր արդյունքները հաշվարկվում են սույն օրենսգրքի 96.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գնահատման 4 տարիների և 96.2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գնահատման արդյունքների հիման վրա:

4. Գնահատման հանձնաժողովը սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված գնահատման ընդհանուր արդյունքների հիման վրա, ըստ յուրաքանչյուր չափանիշի և ըստ գնահատումների հանրագումարի, դատավորների գործունեությունը գնահատում է.

1) բարձր,

2) լավ,

3) միջին,

4) ցածր:

5. Դատավորների գործունեության գնահատման արդյունքներով բացահայտված խնդիրները, ինչպես նաև առանձին դատավորների *գործունեության* ցածր արդյունքները քննարկվում են գնահատման հանձնաժողովում:

6. Գնահատման հանձնաժողովը յուրաքանչյուր դատավորի *3-օրյա ժամկետում* ուղարկում է նրա՝ սույն հոդվածի 4-րդ *մասում նշված* գնահատականը: Գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկությունները տրամադրվում են նաև այն դատարանի նախագահին, որտեղ աշխատում է դատավորը:

7. Գնահատման արդյունքների վերաբերյալ գնահատման հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան:

8. Գնահատման հանձնաժողովի որոշումը դատարանի կողմից անվավեր ճանաչվելու դեպքում անցկացվում է տվյալ դատավորի գործունեության նոր գնահատում՝ սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

9. Դատավորը կարող է գնահատման արդյունքների վերաբերյալ գնահատման հանձնաժողովի որոշումների դեմ ներկայացնել առարկություն, որը կցվում է այդ որոշումներին:

Հոդված 96.4. Դատավորների գործունեության գնահատման հետևանքները

1. Գնահատման ընդհանուր արդյունքներով դատավորի գործունեությունը ցածր գնահատելու դեպքում գնահատման հանձնաժողովը որոշում է կայացնում դատավորին լրացուցիչ վերապատրաստման ուղարկելու մասին՝ սահմանելով այն չափանիշները, որոնցով նրա հմտությունները կատարելագործվելու անհրաժեշտություն ունեն:

Գնահատման հանձնաժողովի որոշումները տրամադրվում են ուսումնական հարցերի հանձնաժողովին՝ վերապատրաստման ուղղությունները որոշելու նպատակով:

2. Գնահատման ընդհանուր արդյունքներով դատավորի գործունեությունը միջին գնահատվելու դեպքում գնահատման հանձնաժողովը դատավորին առաջարկում է անցնել լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ, եթե գնահատմամբ բացահայտվում է որոշակի չափանիշով նրա հմտությունները կատարելագործելու անհրաժեշտություն: Դատավորի՝ վերապատրաստում անցնելու

համաձայնության դեպքում գնահատման հանձնաժողովի որոշումը տրամադրվում է ուսումնական հարցերի հանձնաժողովին՝ վերապատրաստման ուղղությունները որոշելու նպատակով:

3. Գնահատման ընդհանուր արդյունքներով դատավորի գործունեությունը ցածր գնահատվելու դեպքում դատավորը չի կարող դիմել ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվելու կամ դատարանի նախագահի թափուր պաշտոնը համալրելու համար՝ մինչև գնահատման արդյունքների հաջորդ ամփոփումը:

4. Այն դատավորները, որոնց գործունեությունը գնահատման ընդհանուր արդյունքներով երկու անգամ անընդմեջ գնահատվել է բարձր, դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու համար դիմելիս ունեն ցուցակում ընդգրկվելու նախապատվության իրավունք:

5. Այն դատավորները, որոնց գործունեությունը գնահատման ընդհանուր արդյունքներով երկու անգամ անընդմեջ գնահատվել է *համապատասխանաբար* բարձր և լավ, դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու համար դիմելիս սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված անձանցից հետո ունեն ցուցակում ընդգրկվելու նախապատվության իրավունք՝ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով, իսկ նրանցից հետո նախապատվության իրավունք ունեն այն դատավորները, որոնց գործունեությունը գնահատման ընդհանուր արդյունքներով երկու անգամ անընդմեջ գնահատվել է լավ:

6. Եթե ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու նպատակով դիմել է ցուցակի համապատասխան բաժինը լրացնելու համար նախապատվության իրավունք ունեցող անհրաժեշտ քանակից ավելի թեկնածու, ապա Արդարադատության խորհուրդը նրանց վերաբերյալ անցկացնում է քվեարկություն՝ սույն օրենսգրքի 137-րդ և 138-րդ հոդվածներով նախատեսված կարգով, հաշվի առնելով՝

1) ինքնագնահատման թերթիկը,

2) գնահատման հանձնաժողովի որոշումը,

3) գնահատման հանձնաժողովի որոշման վերաբերյալ դատավորի առարկությունը (առկայության դեպքում):

96.5. Գնահատման հանձնաժողովի անդամ գործող դատավորների գործունեության գնահատումը

1. Գնահատման հանձնաժողովի անդամ գործող դատավորների գնահատումն իրականացվում է սույն գլխով սահմանված ընդհանուր կարգով:

Հանձնաժողովի գնահատվող անդամը չի մասնակցում իր գործունեության գնահատմանը և արդյունքների ամփոփմանը:

2. Հանձնաժողովի անդամի գնահատման արդյունքների վերաբերյալ որոշում ընդունելիս ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված՝ հօգուտ գնահատման հանձնաժողովի անդամի:

Հոդված 5. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք Արդարադատության խորհրդի որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասում «ուսումնական հարցերի հանձնաժողովը» բառերից հետո լրացնել «, Դատավորների ընդհանուր ժողովի գնահատման հանձնաժողովը» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 135-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 135. Դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակի կազմման, դատարանի նախագահի, վերաքննիչ դատարանի դատավորի, վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և նախագահի նշանակման հետ կապված՝ քվեաթերթիկներով քվեարկության ժամանակ հաշվի առնվող հատկանիշները

1. Արդարադատության խորհրդի անդամը դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակի կազմման, դատարանի նախագահի, վերաքննիչ դատարանի դատավորի, վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և նախագահի նշանակման վերաբերյալ քվեաթերթիկներով քվեարկելիս հաշվի է առնում դատավորների գործունեության գնահատման արդյունքները:

2. Դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակների կազմման ժամանակ հաշվի են առնվում դատավորների գործունեության գնահատման վերջին երկու արդյունքները:

Հոդված 8. Օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերն են՝

1) արդարադատություն իրականացնելիս նյութական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ.

2) արդարադատություն իրականացնելիս դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ.

3) դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտումը.

4) դատավորի կողմից սույն օրենսգրքի 12-րդ հոդվածով, 105-րդ հոդվածի 2-րդ մասով, 156-րդ հոդվածի 3-րդ մասով, 159-րդ հոդվածի 3-րդ մասով, 167-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու և փորձաշրջանի ղեկավարի իր համար սահմանված պարտականությունները չկատարելը.

5) սույն օրենսգրքով սահմանված կարգով էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու կամ օրենքով չնախատեսված այլ ներգործության մասին չհայտնելը:

Հոդված 9. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 153.1-րդ և 153.2-րդ հոդվածներով.

«Հոդված 153. 1. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու ժամկետները

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝

1) սույն օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով՝ տվյալ գործով կամ հարցով համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում.

2) սույն օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով՝ այն հայտնաբերելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ հիմքը ծագելուց վեց ամիս հետո.

3) սույն օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով՝ այն հայտնաբերելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ հիմքը ծագելուց մեկ տարի հետո.

4) սույն օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով՝ այն հայտնաբերելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ հիմքը ծագելուց մեկ տարի հետո:

Հոդված 153.2. Նյութական և դատավարական նորմն ակնհայտ և կոպիտ խախտելը չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ

1. Սույն գլխի իմաստով ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

2. Կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որը հեղինակազրկում է արդարադատությունը կամ անհամատեղելի է դատավորի բարձր կոչման հետ:

3. Կոպիտ է նաև պարբերաբար կատարված այն խախտումը, որը առանձին վերցված կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակազրկում է արդարադատությունը կամ դատավորի բարձր կոչումը:

4. Սույն գլխի իմաստով նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը կատարված է չարամտությամբ, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

5. Սույն գլխի իմաստով նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը կատարված է կոպիտ անփութությամբ, եթե դատավորը չի կանխատեսել իր վարքագծի ոչ իրավաչափ *բնույթը*, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

6. Արդարադատություն իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության:»:

Հոդված 10. Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասից հանել «աշխատանքային կարգապահության կամ» բառերը,

Հոդված 11. Օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. վարույթը հարուցած անձը խախտել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքի համար սույն օրենսգքով սահմանված ժամկետները, եթե դատավորը համաձայն է վարույթի կարճմանը նշված հիմքով .»:

Հոդված 12. Ուժը կորցրած ճանաչել օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 155-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը:

Հոդված 13. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքի 5-րդ և 8-ից-13-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին, 2-րդ և 6-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2014 թվականի օգոստոսի 1-ից:

3. Սույն օրենքի 4-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

4. Սույն օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

5. Հայաստանի Հանրապետության բոլոր դատավորների գործունեության՝ ՀՀ դատական օրենսգրքի 96.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված առաջին գնահատումը սկսվում է 2015 թվականի հունվարի 1-ից:

6. Դատավորների գործունեության առաջին գնահատումն անցկացվում է երեք տարիների տվյալների հիման վրա:

7. Գնահատման առաջին հանձնաժողովը ձևավորվում է մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը:

8. Գնահատման առաջին հանձնաժողովի անդամի թեկնածուն պետք է ունենա դատավորի պաշտոնում առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ:

9. Սույն օրենքի 7-րդ հոդվածն ուժի մեջ մտնելուց հետո առաջին անգամ դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակների կազմման ժամանակ հաշվի է առնվում դատավորների գործունեության գնահատման առաջին արդյունքը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյան /19.05.2014թ., թիվ 030-Ե-59/	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ**		
	1. Նախագծի 3-րդ հոդվածով, ի թիվս այլնի, առաջարկվում է Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) լրացնել 96.1-րդ հոդվածով, որի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորների գործունեության գնահատման նպատակներից է նպաստել դատավորների կողմից իրենց գործունեության ինքնավերլուծությանը: Կարծում եմ, որ «գործունեության ինքնավերլուծություն» եզր չի կարող գոյություն ունենալ, այլ կարող է լինել կամ գործունեության (այդ թվում նաև սեփական գործունեության) վերլուծություն, կամ ինքնավերլուծություն: Այս դեպքում կիրառելի է առաջինը:	1. Ընդունվել է	1. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	2. 3-րդ մասում «ընտրության» բառն անհրաժեշտ է փոխարինել «ընտրությանը» բառով:	2. Ընդունվել է	2. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	3.	3.	3.
	1) Որպես լրացում առաջարկվող 96.2-րդ հոդվածով բացահայտվում են դատավորի գործունեության գնահատման քանակական և որակական չափանիշները:	1) Ընդունվել է մասնակիորեն	1) Որպես որակական չափանիշ ամրագրվել է դատավորի կողմից դատական ակտի պատճառաբանման կարողությունը, որն իր մեջ

	Ընդհանուր առմամբ կողմ լինելով դատավորների գնահատմանը, չեմ կարող համաձայնել հատկապես նախագծով առաջարկվող որակական չափանիշների տարրերի հետ:		ներառում է՝ ա) դատական ակտերի կառուցվածքին ներկայացվող պահանջները պահպանելը, բ) դատական ակտի հստակությունը, գ) գրավոր խոսքի մատչելիությունը, դ) վերլուծական հմտությունները, ե) դատական ակտի եզրափակիչ մասի որոշակիությունը:
	2) Առաջարկում եմ հանել 9-րդ մասի 1-ին կետը, քանի որ նյութական և դատավարական իրավունքը կիրառելու հմտությունը և գործն ըստ էության լուծող դատական ակտերը հիմնավորելու որակը (ընդ որում պարզ չէ, թե ինչու միջանկյալ ակտերի հիմնավորման որակը չի կարևորվել) երևում են վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման արդյունքում և ըստ այդմ այն բեկանվում է կամ չի բեկանվում, կամ բեկանվում է մասնակի, ինչն արդեն իսկ երևում է քանակական չափանիշների մեջ:	2) Ընդունվել է մասնակիորեն	2) Նախագծի համապատասխան դրույթը խմբագրվել է:
	3) Առաջարկում եմ հանել 2-րդ կետի «ա» ենթակետը՝ «մասնագիտական վարքագծի կանոնների պահպանումը, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավորը այդ կանոնների չպահպանման համար սույն օրենսգրքով սահմանված կարգով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության», քանի որ մասնագիտական վարքագծի էական կանոնների խախտումների դեպքերով դատավորը ենթարկվում է պատասխանատվության, իսկ դրանցից զատ բոլոր այլ, այսինքն ոչ էական խախտումները, ըստ իս, արձանագրման ենթակա չեն:	3) Ընդունվել է մասնակիորեն	3) Նախագծի համապատասխան դրույթը խմբագրվել է:

	4) 3-րդ կետում առաջարկվում է գնահատել դատավորի հաղորդակցման հմտությունները, որոնց հատկապես 3-րդ ենթակետը (դատական նիստի ընթացքում լսելու կարողությունը) առաջարկում եմ հանել:	4) Ընդունվել է	4) Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	5) Առաջարկում եմ հանել 4-րդ կետն ամբողջությամբ, որը սահմանում է դատավորի մասնագիտական ներգրավվածությունը՝ ա) մասնակցությունը դատական իշխանության ինքնակառավարման մարմինների աշխատանքներին, բ) մասնակցությունը օրենսդրության զարգացման միջոցառումներին, գ) գիտելիքները և հմտությունները (այդ թվում՝ ոչ իրավաբանական) զարգացնելու նպատակով դատավորի մասնակցությունը կրթական և մասնագիտական վերապատրաստման ծրագրերին, դ) արդարադատության իրականացման համար անհրաժեշտ համակարգչային և տեխնիկական այլ միջոցներին տիրապետելու հմտությունները, ե) մասնագիտական գիտելիքներով և փորձով փոխանակվելու պատրաստակամությունը: Ընդհանուր առմամբ այս **բոլոր** կետերը չեն կարող որևէ կերպ պատկերացում տալ դատավորի մասնագիտական կարողությունների մասին, ավելին նմանաբնույթ գնահատումը համարում եմ առնվազն անիմաստ, իսկ վերջին կետը բացի նրանից, որ որևէ կապ չունի դատավորի գործունեության գնահատման հետ, նաև չափից դուրս սուբյեկտիվ մոտեցման տեղիք է տալու:	5) Ընդունվել է	5) Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	6) 5-րդ կետով առաջարկվում է սահմանել, որ գնահատման են ենթակա կազմակերպչական հմտությունները (գնահատվում է միայն դատարանների նախագահների և վճռաբեկ դատարանի պալատների նախագահների պարագայում)՝ ա) նպատակներ սահմանելու և դրանց հասնելուն ուղղված մարդկային ու նյութական ռեսուրսները կազմակերպելու ունակությունը,	6) Ընդունվել է մասնակիորեն	6) Նախագծի տեքստից հանվել է «բ» կետը: Հարկ է նկատել, որ դատավորի կազմակերպչական հմտությունների գնահատումը կարևորվում է մի շարք միջազգային փաստաթղթերով և այն դատավորների գործունեության գնահատման որակական չափանիշների մեջ իր ուրույն նշանակությունն ունի:

	բ) գործընկեր դատավորներին և դատական ծառայողներին մոտիվացնելու ունակությունները, գ) գործընկեր դատավորների և դատական ծառայողների հետ հարաբերությունների որակը: **Գտնում եմ, որ առնվազն անիմաստ է այս մասով գնահատում իրականացնելը, քանի որ բոլոր այս կատեգորիաները չափազանց սուբյեկտիվ են, դրանք, ինչպես և նախորդ կետերը, անգամ կարող են գնահատողներին բոլորովին անհայտ լինել, և անհրաժեշտ է նախագծից հանել այս կետը:**		
	4. Գտնում եմ, որ առանց այդ էլ գերծանրաբեռնվածությամբ աշխատող դատավորներին նոր և առավել ևս արդարադատության իրականացման հետ կապ չունեցող պարտավորություններով ծանրաբեռնելն առնվազն ավելորդ է (10-րդ մաս՝ դատավորների կողմից միմյանց գնահատելը) և չի բխում նրանց սահմանադրաիրավական կարգավիճակից: 11-րդ կետի 2-րդ մասի անհրաժեշտությունն ու նպատակն ընդհանրապես անհասկանալի են, ավելին, միևնույն դատարանում աշխատող դատավորների կողմից իրար գնահատելը կրելու է խիստ սուբյեկտիվ բնույթ (նույն տեղում «5)-րդ» բառն անհրաժեշտ է փոխարինել «5-րդ» բառով):	4. Ընդունվել է մասնակիորեն	4. Գնահատող դատավորների ինստիտուտը հանվել է և գնահատման ընդհանուր արդյունքների ամփոփումը կենտրոնացվել է գնահատման հանձնաժողովում:
	5. Նույն հոդվածի 12-րդ մասում «101-րդ» բառն անհրաժեշտ է փոխարինել «11-րդ», «1)-ին» բառը՝ «1-ին» բառով, «դատավորները, որոնք» բառերը՝ «դատավորները, ովքեր» բառերով, «111-րդ» բառը՝ 11-րդ բառով, նախավերջին նախադասության մեջ: 16-րդ մասում «պրատականությունները» բառն անհրաժեշտ է փոխարինել «պարտականությունները» բառով: 18-րդ մասում «1)-ին» բառը պետք է փոխարինել «1-ին» բառով: 21-րդ մասում «Դատավրանների» բառը պետք է փոխարինել «Դատարանների» բառով, ինչպես նաև հանել «ների» վրիպակը:	5. Ընդունվել է	5. Նախագծի համապատասխան դրույթները խմբագրվել են:

	Այսպիսով, գտնում եմ, որ 96.2-րդ հոդվածը ենթակա է խմբագրման՝ հաշվի առնելով վերոնշյալ մոտեցումները:		
	6. Որպես լրացում առաջարկվող 96.2-րդ հոդվածի 22-րդ մասում, 96.3-րդ հոդվածի 11-րդ մասում, 96.4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ (2 տեղ), 6-րդ և 8-րդ մասերում, նախագծի 6-րդ և 11-րդ հոդվածներում, որտեղ նշվում է «96.3-րդ հոդվածի 100-րդ մաս» բառերը, սակայն այդ հոդվածը 100-րդ մաս չունի, առաջարկում եմ համապատասխանեցնել:	6. Ընդունվել է	6. Նախագծում «100-րդ մաս» բառերի առկայությունը տեխնիկական վրիպակի արդյունք էր, ինչը շտկվել է:
	7. Պարզ չէ, թե ինչ նպատակ է հետապնդում դատավորների ինքնագնահատումը, ավելին, դա ամենասուբյեկտիվ գնահատականն է, որը չի կարող համեմատության մեջ դրվել գնահատման այլ արդյունքների հետ: Բացարձակապես անիմաստ եմ համարում որպես լրացում առաջարկվող 96.3-րդ հոդվածի 3-8-րդ և 14-րդ կետերը, որոնք վերաբերում են դատավորի ինքնագնահատմանը:	7. Չի ընդունվել	7. Ինքնագնահատումը կարևոր գործիք է դատավորի գործունեության գնահատման գործընթացում: Գնահատման հանձնաժողովը հնարավորություն է ստանում անմիջականորեն դատավորից ստանալ ինքնագնահատման տվյալները և ստուգել դրանց հիմնավորվածությունը:
	8. Առաջարկում եմ որպես լրացում առաջարկվող 96.4-րդ հոդվածից հանել բոլոր այն դրույթները, որոնք որևէ կերպ վերաբերում են դատավորի լիազորությունների դադարեցմանը, քանի որ այսպիսով վտանգվում է դատավորի առանց այդ էլ հաճախ ձևական բնույթ կրող անկախությունը (3-րդ և 4-րդ մասեր): Նույնկերպ, անհրաժեշտ է նախագծից հանել 11-րդ հոդվածը:	8. Ընդունվել է	8. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	9. Առաջարկում եմ նախագծով խմբագրվող 135-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «առնվազն» բառը՝ ապահովելու համար նորմի միատեսակ կիրառությունը:	9. Ընդունվել է	9. Նշված դրույթը խմբագրվել է:
	10. Առաջարկում եմ խմբագրել որպես լրացում առաջարկվող 153.2-րդ հոդվածի 1-ին մասը՝ ողջամիտ իրավական ենթադրության կամ փաստարկի մասով, կամ տալ դրա սահմանումը, քանի որ ողջամտությունը եղել և մնում է գնահատողական հասկացություն:	10.Չի ընդունվել	10. Ողջամտությունը հանրահայտ հասկացություն է և սահմանման կարիք չունի: Այն պետք է կոնկրետացվի իրավակիրառ պրակտիկայում:

	11. Նույն հոդվածի 12-րդ մասում «ծանուցել է» բառերից առաջ առաջարկում եմ ավելացնել «պատշաճ կարգով» բառերը, ինչպես նաև հանել 13-րդ կետը, որը կարող է բազմաթիվ տարամեկնաբանությունների և սուբյեկտիվիզմի տեղիք տալ: 12. Նախագծի 10-րդ հոդվածում նշվում են «162-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ կետը» բառերը, սակայն այդ հոդվածում 2.1-րդ կետ չկա: Առաջարկում եմ համապատասխանեցնել: Իսկ եթե խոսքն այստեղ 162-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի մասին է, ապա ստացվում է, որ դատավորն իր ենթադրյալ խախտման վաղեմության ժամկետն անցնելու հիմքով իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի կարճման հետ համաձայն չլինելու դեպքում այլևս չի կարող պահանջել, որպեսզի վարույթը շարունակվի, ինչը համարում եմ անընդունելի, քանի որ բնական է, որ խախտում թույլ չտված (ամենաքիչը՝ այդպես համարող) դատավորը շահագրգռված է, որպեսզի վարույթը շարունակվի, որպեսզի նա հնարավորություն ունենա ապացուցել իր ճշմարտացիությունը: 13. Նախագծի 12-րդ հոդվածում առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 78-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 155-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը: Օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսանկյունից սա անընդունելի խմբագրություն է, քանի որ օրենքի նախագծում անհրաժեշտ է պահպանել լրացվող, խմբագրվող և ուժը կորցնող հոդվածների հերթականությունը, ըստ այդմ, առաջարկում եմ խմբագրել:	11. Ընդունվել է 12. Ընդունվել է 13.Չի ընդունվել	11. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 12. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 13. Ներկայացված առաջարկությունն անհասկանալի է:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արփինե Հովհաննիսյան	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ**		

	1. Նախագծի 2-րդ հոդվածով օրենսգրքի 74-րդ հոդվածում լրացվող 4.1-րդ մասում ինչ սկզբունքով /չափանիշներով/ են նշված համապատասխան դատարաններից ընտրվում գնահատման հանձնաժողովի անդամ դատավորներին: Արդյոք հարկավոր չեն չափանիշներ, ինչպես դա արվել է 96.1-ին հոդվածի 10-րդ մասում անմիջականորեն գնահատվող դատավորների համար: Բացի դարնից լավ կլինի, որ որոշակի ժամկետներով ու պայմաններով ձևավորվի հանձնաժողովը, ինչը արված է օրինակ կարգապահական հանձնաժողովի համար օրենսգրքի 106-րդ հոդվածում:	1.Ընդունվել է	1. Նախագծի՝ առաջին ընթերցմամբ քննարկման ներկայացված տեքստում արդեն իսկ ամրագրվել են ներկայացված առաջարկին համապատասխան կարգավորումներ: Ինչ վերաբերում է հանձնաժողովի գործունեության ժամկետին, ապա այդ հարցը կարգավորված է 2014թ. հունիսի 10-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով:
	2. Նախագծում ստույգ նշված չեն վերաքննիչ և վճռաբեկ դատարանների գնահատման չափանիշները, իսկ լրացվող 96.2-րդ հոդվածի 10-րդ մասը պարզաբանման կարիք ունի, քանի որ պարզ չի, ինչպես է իրականացվելու գնահատումը ինչպես նշված է՝ «այն դատական կազմերի մասով, որոնց մասնակից է եղել այն դատավորը, որի գործունեությունը գնահատվում է»: Բացի այդ, 10-րդ մասում նշված է միայն քանակական հատկանիշների գնահատման առանձնահատկությունը, իսկ ինչպես է անցկացվելու որակական գնահատումն, հաշվի առնելով կոլեգիալ քննության առանձնահատկությունները:	2.Ընդունվել է	2. Առաջարկությամբ ներկայացված դրույթները խմբագրվել են և առկա են նախագծի՝ առաջին ընթերցմամբ քննարկման ներկայացված տեքստում:
	3. Նախագծով լրացվող 96.2-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով որպես դատավորների գործունեության գնահատման որակական չափանիշ նշված է նաև «նյութական և դատավարական իրավունքը կիրառելու հմտությունների» ստուգումը: Բոլոր տեղերում, այդ թվում Կիևյան հանձնարարականում, արտասահմանյան փորձում, այս հատկանիշը տրվում է որպես նյութական և դատավարական նորմերի իմացություն, խնդիրը այն է, որ դատավորները չպետք է գնահատվեն իրենց ակտերի բովանդակության հիման վրա ու ձևակերպումը մի քիչ վտանգավոր է, նշված	3.Ընդունվել է	3. Նախագծի՝ առաջին ընթերցմամբ քննարկման ներկայացված տեքստում նշված նորմերը շարադրվել են նոր խմբագրությամբ:

	դրույթը կարող է անուղղակի հնարավորություն տալ գնահատել դատական ակտի բովանդակությունը: Նույն մասի 4-րդ կետի «ա» ենթակետում որպես դատավորի մասնագիտական ներգարվվածության չափանիշ նշված է «մասնակցությունը դատական իշխանության ինքնակառավարման մարմինների աշխատանքներին», ինչը անձի, այս դեպքում դատավորի միավորվելու իրավունքի իրացման տարր է, և դատավորն ինքն է որոշում իր մասնակցության ծավալը, որը գնահատման առարկա չպետք է հանդիսանա: Նման մոտեցում է արտահայտել նաև Վենետիկի հանձնաժողովն իր կարծիքի 55-րդ կետում, նշելով, որ մասնակցությունն նման միավորումների գործունեությանը դատավորի իրավունքն է, այլ ոչ պարտականությունը: Կարելի է քննարկել նախագծում միայն բովանդակային ցուցիչներով որակական չափանիշները թողնելը:		
	4. Նախագծով լրացվող 96.2-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետի «գ» ենթակետում նշված է, որ գնահատման ենթակ է նաև դատարանների նախագահների և վճռաբեկ դատարանի պալատների նախագահների՝ գործընկեր դատավորների և դատական ծառայողների հետ հարաբերությունների որակը: Որ հարաբերությունների՝ անձնական, ծառայողական, թե այլ հարաբերությունների:	4.Ընդունվել է մասնակիորեն	4. Նշված նորմը որոշակիորեն խմբագրվել է:
	5. Չնայած Նախագծով լրացվող 96.2-րդ հոդվածի 22-րդ մասում նշված 40 և 60 հարաբերակցությունը Վենետիկի հանձնաժողովի առաջարկությունն է, այնուամենայնիվ, վստահ չեմ, որ սա, գոնե այս փուլում, ճիշտ մոտեցում է (հաշվի առնելով որոշ որակական չափանիշների անորակությունը, դարնց կիրառման սուբյեկտիվության գործոնը և այլն): Կարծում եմ, այս փուլում ավելի ընդունելի է գոնե 50 տոկոս սահմանելը (ինչը Վենետիկն էլ համարել է որպես ընդունելի տարբերակ):	5.Չի ընդունվել	5. Նախագծի՝ առաջին ընթերցմամբ քննարկման ներկայացված տեքստով լրացվող 96.2-րդ հոդվածի 15-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենսգրքի 96.3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված գնահատման ընդհանուր արդյունքներում դատավորի գործունեության

			գնահատման որակական չափանիշները պետք է առնվազն քսան տոկոսով գերակայեն քանակական չափանիշների նկատմամբ»
	6. Ավելի լավ կլինի, որ վերագնահատման կարգը օրենքով սահմանվի:	6. Չի ընդունվել	6. Վերագնահատման ինստիտուտն ամբողջովին հանվել է նախագծից, դրա փոխարեն սահմանվել է, որ գնահատման հանձնաժողովի որոշումը դատարանի կողմից անվավեր ճանաչվելու դեպքում անցկացվում է տվյալ դատավորի գործունեության նոր գնահատում՝ սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:
	7. Նախագծով լրացվող 96.3-րդ հոդվածի 5-րդ մասում «անհատական գնահատման թերթիկ» և «ինքնագնահատման հաշվետվություն» եզրույթները շփոթ են առաջացնում: Դա ըստ էության դառնում է ոչ թե ինքնագնահատման հաշվետվություն, այլ անհատական գնահատման թերթիկի վերաբերյալ հաշվետվություն, քանի որ իրենք իրենց չեն գնահատում: Ուստի, լավ կլինի, եթե եզրույթը փոխվի:	7. Ընդունվել է	7. Օրինագծի՝ առաջին ընթերցմամբ քննարկման ներկայացված տեքստից «անհատական գնահատման թերթիկ» եզրույթն ամբողջովին հանվել և փոխարինվել է «ինքնագնահատման թերթիկ» եզրույթով:
	8. Նախագծով լրացվող 96.3-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետում «միջին» բառը փոխարինել «բավարար» բառով:	8. Չի ընդունվել	8. Գտնում ենք, որ «միջին» բառը տվյալ դեպքում առավել ընդունելի է:
	9. Նախագծով լրացվող 96.4-րդ հոդվածի 3-րդ մասը հանել, քանի որ դատավորների գնահատումը չպետք է դառնա գործիք նրանց պատժելու համար, այլ ընդհակառակը պետք է առավելապես հանդես գա որպես աշխատանքի բարելավման կամ խրախուսման եղանակ: Այս առումով Կիևյան հանձնարարականներում ևս առկա են որոշակի մոտեցումներ:	9. Ընդունվել է	9. Նշված դրույթը հանվել է օրինագծի՝ առաջին ընթերցմամբ քննարկման ներկայացված տեքստից:

	10. Առաջարկում եմ նախագծով լրացվող 153.2-րդ հոդվածից հանել «կոպիտ անփութությամբ» եզրույթը, քանի որ անհստակություններ են առաջանում կարգապահական հիմքերի, ինչպես նաև քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հետ կապված:	10. Չի ընդունվել	10. Գտնում ենք, որ նշված ձևակերպումը անհստակությունների տեղիք չի կարող տալ, քանի որ լրացվող 153.2-րդ հոդվածով հստակորեն սահմանվել է, թե նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը երբ է համարվում կատարված կոպիտ անփութությամբ: Բացի այդ, այդ եզրույթը նախատեսված է նաև ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի 4.2 կետում:
	Առաջարկվում է նաև 11.‹‹Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին›› (Կ-499-23.04.2014, 12.06.2014-ՊԻ-010/0) առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝Նախագիծ) 4-րդ հոդվածով լրացված ՀՀ դատական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 96.2-րդ հոդվածի՝		
	11.1. 3-րդ մասում «*երեք*» բառը փոխարինել «*հինգ*» բառով.	11.1 Ընդունվել է մասնակի	11.1 Սահմանվել է գնահատման 4-ամյա պարբերականություն: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ դատավորների գործունեության գնահատումը, որպես կանոն, իրականացվում է 2-4 տարիների կտրվածքով (Օրինակ, Բելգիա՝ 3 տարի, Ֆրանսիա՝ 2 տարի, Իտալիա՝ 4 տարի, Գերմանիա՝ 4 տարի, Մոլդովա 3 տարի և այլն): Բացի այդ, նշված ժամկետը սահմանվել է ընդհանուր համակարգային լուծումների շրջանակներում, իսկ գնահատման 5-ամյա պարբերականությունը համահունչ չէ գնահատման հանձնաժողովի գործունեության

			ժամկետներին: Մասնավորապես, գնահատման հանձնաժողովը գործելու է 4 տարի, հետևաբար կարող է ստացվել այնպես, որ այն իր գործունեությամբ չիրականացնի որևէ գնահատում:
	11.2. հանել 5-րդ մասի երկրորդ կետը, այն է՝ «2) ըստ գործերի առանձին տեսակների գործերի քննության միջին տեւողությունը (հաշվարկի միավոր՝ օր),››: Կարծում եմ՝ եթե դատավորի կողմից պահպանվել են դատավարական ժամկետները, ապա 96.2-րդ հոդվածի 5-րդ մասում նշված քանական չափանիշի սահմանումը նպատակահարմար չէ, քանի որ նման չափանիշի սահմանումը կարող է կաշկանդել դատարանին գործի խորը և բազմակողմանի վերլուծության իրականացման հարցում: Վենետիկի հանձնաժողովի կարծիքում նույնպես անդրադարձ է կատարվել տվյալ հարցին (տես՝ CDL-AD (2014) 007 para. 43).	11.2 Չի ընդունվել	11.2. Գործերի քննության միջին տևողությունը կարևոր չափանիշ է դատավորի գործունեության գնահատման համար: Նույնիսկ եթե դատավորը պահպանել է օրենքով սահմանված կոնկրետ դատավարական ժամկետները, գործի արդյունավետությունը պայմանավորված է նաև գործի քննության ընդհանուր տևողությամբ, որը և գործի քննության ողջամիտ ժամկետն է:
	11.3. հանել 9-րդ մասը (փոխկապակցված 1.2 կետի հետ).	11.3 Չի ընդունվել	11.3 Տես 11.2-րդ կետը
	11.4. հանել 10-րդ մասի 1-ին կետի ‹‹ա›› ենթակետը, քանի որ դատական ակտի պատճառաբանման կարողությունը որակական չափանիշ է, մինչդեռ 96.2-րդ հոդվածի 10-րդ մասին 1-ին կետի ‹‹ա››–ում սահմանված «դատական ակտերի կառուցվածքին ներկայացվող պահանջները պահպանելը» տեխնիկական բնույթ ունի և պատճառաբանման կարողության գնահատման	11.4 Չի ընդունվել	11.4. Դատական ակտերի կառուցվածքին ներկայացվող պահանջները պահպանելը ուղղակիորն կապված է դատական ակտի պատճառաբանման կարողության հետ: Դատական ակտ կազմելիս անհրաժեշտություն է առաջանում տարանջատել փաստական և իրավական հանգամանքները, իսկ եզրափակիչ մասը պետք է խարսխվի պատճառաբանական մասում արված եզրահանգումների վրա, հետևաբար դատական ակտի կառուցվածքը պահպանելն անմիջականորեն կարող է ազդել դատական ակտի որակի վրա:

	չափորոշիչ չի հանդիսանում: Տվյալ չափորոշիչը կարևոր է և այն կարելի է ներառել Նախագծում որպես որևէ այլ չափանիշի տարր.		
	11.5. Հանել 10-րդ մասի 2-րդ կետի ‹‹գ)›› ենթակետը, քանի որ «ինքնատիրապետումը պահպանելու կարողությունը» չի հանդիսանում «մասնագիտական կարողություններ» որակական չափանիշի գնահատման չափորոշիչ: Նշված չափորոշիչի գնահատումը դատավորի համար ունի կարևոր նշանակություն, սակայն առավել տրամաբանական կլինի Նախագծում այն սահմանել որպես որևէ այլ որակական չափանիշի տարր:	11.5 Չի ընդունվել	11.5 «Ինքնատիրապետումը պահպանելու կարողությունը» նախագծում սահմանված չափանիշներից առավելապես համապատասխանում է հենց «մասնագիտական կարողություններ» որակական չափանիշին:
	11.6. 11-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Եթե կոլեգիալ կազմով քննվող գործով դատավորը ներկայացրել է հատուկ կարծիք, ապա նրա գործունեությունը սույն հոդվածի *10-րդ մասի 1-ին կետի ‹‹ա››, ‹‹բ›› և ‹‹ե››* ենթակետերով սահմանված չափանիշներով չի գնահատվում:»: Կարծում եմ, որ հատուկ կարծիքի «գրավոր խոսքի մատչելիությունը» և «վերլուծական հմտությունները» կարող են լինել գնահատման առարկա.	11.6 Չի ընդունվել	11.6 Օրենքը դատավորի կողմից հատուկ կարծիք ներկայացնելու նկատմամբ որևէ պահանջ չի սահմանում, հետևաբար, հատուկ կարծիքում «գրավոր խոսքի մատչելիությունը» և «վերլուծական հմտությունները» գնահատելն անհնարին կլինի:
	11.7. Հստակեցնել 14-րդ մասով սահմանված «պատահական ընտրության» մեխանիզմը (օր.՝ համակարգչի միջոցով ընտրված):	11.7 Չի ընունվել	11.7 Նշված հարցը առավելապես տեխնիկական բնույթի է, այդ իսկ պատճառով այն իր կարգավորումը կստանա ԴՆԽ որոշմամբ՝ նախագծի 96.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարանների նախագահների խորհուրդը սահմանում է դատավորների գործունեության գնահատման կարգը…»

	12.Նախագծի 4-րդ հոդվածով լրացված Օրենսգրքի 96.3-րդ հոդվածի՝		
	12.1 երկրորդ մասը խմբագրել, քանի որ առկա խմբագրությամբ ստացվում է, որ գնահատման հանձնաժողովը «*ամփոփում է* գնահատման արդյունքները» դատավորի ինքնագնահատման թերթիկի և ՀՀ դատական դեպարտամենտի տրամադրած տվյալների հիման վրա:	12.1 Ընդունվել է	12.1 Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ
	12.2. 6-րդ մասում սահմանել հստակ ժամկետներ (գնահատումից հետո քանի օրվա ընթացքում է հանձնաժողովն ուղարկում դատավորին գնահատականը):	12.2 Ընդունվել է	12.2 Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ
	13. Նախագծի 4-րդ հոդվածով սահմանված Օրենսգրքի 96.4-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին նախադասությունը խմբագրել, քանի որ առկա ձևակերպումը չի ընդգծում այն հանգամանքը, որ դատավորը կարող է ընդգրկվել ծառայողական առաջխաղացման ցուցակում, եթե նրա գործունեությունը մի անգամ գնահատվել է բարձր, իսկ մյուս անգամ՝ լավ երկու անգամ անընդմեջ իրականացված գնահատման արդյունքներով, մինչդեռ Նախագծի տառացի մեկանաբանությունից առաջանում է տպավորություն, որ խոսքը գնում է դատավորի գործունեության երկու անգամ անընդմեջ և՛ բարձր, և՛ լավ գնահատվելու մասին, ինչը գործնականում հնարավոր չէ:	13. Ընդունվել է	13. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ
	14. Նախագծի 9-րդ հոդվածով լրացված Օրենսգրքի		

	153.2 հոդվածի՝ 14.1 Եթե սահմանված է նյութական կամ դատավարական նորմի կոպիտ և ակնհայտ խախտման սահմանումը, ապա նպատակահարմար է նաև քննարկել վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտման հասկացությունը գրելու հարցը: 15. Առաջարկում եմ նաև նախագծի 8-րդ հոդվածով նախատեսված Օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում հանել ‹‹,որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ›› բառերը(ինչպես նաև հանել նշված կետերի հետ փոխկապակցված Նախագծի 9-րդ հոդվածով լրացված Օրենսգրքի 153.2-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերը): Ակնայտ և կոպիտ խախտման դեպքում մեղքի ձևերի վերաբերյալ վերոգրյալ դրույթները հանելու առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Նախագծում առկա ակնհայտ և կոպիտ խախտման վերաբերյալ հասկացություններիը արդեն իսկ ենթադրում են, որ խախտումները պետք է կատարված լինեն կոպիտ անփութությամբ կամ չարամտորեն: Միևնույն ժամանակ ցանկանում ենք ընդգծել, որ վերոգրյալ առաջարկության անընդունելի լինելու դեպքում, նախագծի համապատասխան հոդվածներում ‹‹կոպիտ անփութություն›› բառակապակցությունից հանվի ‹‹կոպիտ›› բառը, քանի որ Նախագծում առկա հասկացությունը առավել շատ	14.1 Չի ընդունվել 15. Չի ընդունվել	14.1. Վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտման հարցը քննարկելիս կարելի է հիմք ընդունել նյութական և դատավարական նորմի կոպիտ և ակնհայտ խախտման սահմանումը՝ կիրառելով օրենքի անալոգիա, ուստի այն ամրագրելու անհրաժեշտություն չկա: 15. Նյութական և դատավարական նորմի կոպիտ և ակնհայտ խախտման առկայությունը դեռևս չի ենթադրում, որ այն պարտադիր պետք է կատարված լինի չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ: Կոպիտ և ակնհայտ խախտման առկայությունը վկայում է արարքի կատարման, բայց դեռևս ոչ մեղքի կոնկրետ ձևի առկայության մասին, հետևաբար մեղքի ձևը որպես կարգապահական պատասխանատվության պարտադիր պայման ամրագրելն անհրաժեշտ է՝ լինելով կարևոր երաշխիք դատավորի անկախությունն ապահովելու համար:

	համապատասխանում է հասարակ անփութության հասկացությանը: **16. Ընդհանուր դիտարկում կից նախագծերի իրավական տեխնիկայի կանոնների վերաբերյալ.** Կից նախագծերում եզակի թվով գրված բառերի կողքին փակագծերում գրված հոգնակին բոլոր տեղերից հանել՝ ‹‹Իրավական ակտերի մասին›› ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթը հաշվի առնելով:	16. Ընդունվել է	16. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ. Սահակյան	1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Կ-499-23.04.2014, 12.06.2014-ՊԻ-010/0) առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 4-րդ հոդվածով լրացված ՀՀ դատական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 96.2-րդ հոդվածի՝ 1.1. 3-րդ մասում «*երեք* տարիների տվյալների հիման վրա» բառերը փոխարինել «*չորս* տարիների տվյալների հիման վրա» բառերով: 1.2. 10-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետը հանել, քանի որ «դատական նիստին ժամանակին ներկայանալը» չի հանդիսանում «մասնագիտական կարողություններ» որակական չափանիշի գնահատման չափորոշիչ: Տվյալ չափորոշիչը կարող է ներառվել Նախագծում որպես որևէ այլ չափանիշի տարր: 1.3. 10-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետում հստակեցնել, թե ինչ նպատակների մասին է խոսքը գնում (տրված խմբագրության տառացի մեկնաբանության	1.1 Ընդունվել է 1.2 Ընդունվել է 1.3 Ընդունվել է	1.1 Տես-պատգամավոր Ա. Հովհաննիսյանի առաջարկների 11.1 կետը 1.2 Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 1.3 Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ

	դեպքում «նպատակներ» հասկացության տակ ընկնում են ցանկացած նպատակները՝ աշխատանքային, կենցաղային և կյանքի ցանկացած այլ ոլորտում): **1.4** 10-րդ մասի 3-րդ կետի «բ» ենթակետը հանել: Անհասկանալի է, թե ինչ է նշանակում «հարաբերությունների պատշաճ մակարդակ» և ինչպես (ինչ տվյալների հիման վրա) է գնահատման հանձնաժողովը գնահատելու դատավորին տվյալ չափորոշիչով (Եթե կոնտեքստում դրված է, օրինակ, այն գաղափարը, որ գնահատման հանձնաժողովը գնահատման իրականացման համար կարող է հարցումներ ուղղել դատավորներին, ապա նման կարգավորման սահմանումը կարող է վատառողջ մթնոլորտ ստեղծել դատավորների միջև և նույնիսկ ազդել դատավորների անկողմնակալության վրա ընթացիկ դատական գործեր քննելիս): Բացի այդ հնարավոր է, որ դատավորը, օրինակ, մեկ այլ դատավորի հետ «հարաբերություններ» չունենա, սակայն ունենա շատ բարձր մասնագիտական կարողություններ, գիտելիքներ և կազմակերպչական հմտություններ (վերաբերելի հարցի անդրադարձել է նաև CDL-AD (2014) 007 para. 53): Հարկ է նաև նշել, որ նշված չափորոշիչը որպես «կազմակերպչական հմտությունների» գնահատման տարր կարող է վերաբերելի լինել դատարանների նախագահներին և վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին, մինչդեռ այդպիսին չհանդիսացող դատավորի կազմակերպչական հմտությունների և, օրինակ, «գործընկեր դատավորների հետ պատշաճ հարաբերությունների պահպանելու» միջև պատճառահետևանքային կապը, կարծես, բավականին թույլ է:	1.4 Չի ընդունվել	1.4 Գտնում ենք, որ նշված չափանիշը նույնպես կազմակերպչական հմտությունները գնահատելու կարևոր բաղադրիչներից մեկն է: Ինչ վերաբերում է Վենետիկյան հանձնաժողովի կարծիքին, ապա այդ հարցի վերաբերյալ Վենետիկյան հանձնաժողովը ուղղակիորեն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «96.2-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ գործընկերների հետ հաղորդակցման հմտությունները 4-րդ չափանիշը կարեւոր է, ինչը, թեեւ, պետք է լինի էթիկայի սկզբունքի ներքո: Որոշ դեպքերում, օրինակ՝ երբ քննարկվում է որեւէ կոնկրետ դատավորի առաջխաղացման հարցը, ապա մասնագիտական բանիմացությունը, անձնական որակները, հաղորդակցման հմտությունները, թիմում աշխատելու ունակությունները կարող են լինել կարեւոր չափանիշներ: Այնուամենայնիվ, գնահատման (որը կարող է հանգեցնել կարգապահական տույժերի) պոտենցիալ հետեւանքները հաշվի առնելով, գնահատողները պետք է մեծագույն զգուշավորությամբ մոտենան գործընկերների միջեւ անձնական կամ աշխատանքային փոխհարաբերություններին: Կան

			դեպքեր, երբ գործընկերները համերաշխ չեն միմյանց հետ, սակայն նրանք կարող են լինել լավ գործընկերներ եւ պատշաճ կառավարման դեպքում նրանց միջեւ շահերի բախումը կարող է նվազագույնի հասցվել: Հարկ է շեշտել, որ շահերի բախման վտանգը նվազագույնի հասցնող պատշաճ երաշխիքերի առկայության դեպքում գործընկերների փոխհարաբերությունների գնահատումը կարող է առաջացնել կողմնակալություն եւ ստեղծել ամբողջ գնահատման գործընթացի նկատմամբ վստահության պակաս:»:
	1.5 12-րդ մասի նախադասության սկզբում ավելացնել «Գործերի կոլեգիալ քննության դեպքում» բառերը, քանի որ պարզ չէ, թե ինչու դատավորի կողմից միանձնյա կարգով քննվող գործերի պարագայում չպետք է գնահատվի տվյալ դատավորի «դատական նիստը վարելու հմտությունները» որպես «մասնագիտական կարողությունների» գնահատման չափորոշիչ:	1.5 Ընդունվել է	1.5 Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ
	1.6 13-րդ մասում հստակեցնել, թե երբ (ինչ պարբերականությամբ) է դատավորը իրականացնում քանակական չափանիշների ինքնագնահատումը: Հաշվի առնելով, որ դատական դեպարտամենտի կողմից նշված չափանիշների գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր տարի, իսկ որակական չափանիշների գնահատումն իրականացվում է երեք տարին մեկ, տրամաբանորեն հետևում է, որ ինքնագնահատումը քանակական չափանիշներով նույնպես պետք է իրականացվի երեք տարին մեկ անգամ: Բացի այդ անհասկանալի է, թե ինչ հավելյալ արժեք կարող է ունենալ դատավորի կողմից քանակական	1.6 Ընդունվել է	1.6 Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	չափանիշներով ինքնագնահատման մեջ Դատական դեպարտամենտի տրամադրած տվյալների կրկնումը: Այդ իսկ պատճառով նույնիսկ ավելի նպատակահարմար և տրամաբանական կլիներ հանել 13-րդ մասի երկրորդ նախադասությունը՝ դատավորի կողմից քանակական չափանիշներով ինքնագնահատում իրականացնելը:		
	2 Վերաձևակերպել Նախագծի 4-րդ հոդվածով լրացված Օրենսգրքի 96.3-րդ հոդվածի երկրորդ մասն այնպես, որ պարզ լինի, որ գնահատման հանձնաժողովը դե ֆակտո իրականացնում է գնահատում, ոչ թե պարզապես «*ամփոփում է* գնահատման արդյունքները»:	2. Ընդունվել է	2. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ
	3 Նախագծի 9-րդ հոդվածով լրացված Օրենսգրքի 153.2-րդ հոդվածի՝		
	3.1 2-րդ մասը խմբագրել այնպես, որ կարգավորումը լինի կանխատեսելի և համապատասխանի իրավական որոշակիության պահանջին, քանի որ նշված ձևակերպումը, այն է՝ «որը հեղինակազրկում է արդարադատությունը կամ անհամատեղելի է դատավորի բարձր կոչման հետ», շատ վերացական է և սուբյեկտիվիզմի տեղիք է տալիս: Սա վերաբերելի է նաև 3-րդ մասին, ընդ որում, ամեն դեպքում, 3-րդ մասը պետք է շարադրվի որպես 2-րդ մասի 2-րդ նախադասություն, ոչ թե որպես 3-րդ մաս:	3.1 Չի ընդունվել	3.1 Նշված ձևակերպումը խնդիր չի առաջացնում իրավական որոշակիության առումով, նմանատիպ դրույթները ՀՀ դատական օրենսգրքում բազմաթիվ են:
	3.2 4-րդ մասից հանել «կամ չէր կարող չգիտակցել» բառերը, քանի որ տրամաբանորեն, եթե «չէր կարող չգիտակցել» ուրեմն «գիտակցել է»:	3.2 Ընդունվել է	3.2 Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ
	3.3 Նախագծի 2-րդ հոդվածում նախատեսված գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկվող երկու նախկին դատավորների փոխարեն հանձնաժողովում ընդգրկել մեկ նախկին դատավոր և մեկ իրավաբան	3.3 Ընդունվել է	3.3 Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ

	գիտնական:		
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Ձհանգիրյան	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ** 1. Վճռաբեկ դատարանի դատավորներին նույնպես ներառել գնահատման ընդհանուր համակարգում: 2. Նախագիծը խմբագրել այնպես, որ դատավորների գործունեության գնահատումն իրականացվի 5 տարին մեկ: 3. Առաջարկվում է «անփութություն» բառը փոխարինել «անզգուշություն» բառով:	1. Ընդունվել է 2. Ընդունվել է մասնակի 3. Չի ընդունվել	1. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 2. Տե՛ս պատգամավոր Հ. Սահակյանի առաջարկությունների 1.1-րդ կետը: 3. Գտնում ենք, որ նշված եզրույթը փոխելու անհրաժեշտություն չկա, քանի որ այն նախատեսված է նաև ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի 4.2 կետում:

ՀՀ կառավարություն	**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ** 1. Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 74-րդ հոդվածի. 4. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Դատավորների ընդհանուր ժողովը ձեւավորում է էթիկայի եւ կարգապահական հարցերի, ուսումնական հարցերի, *ինչպես նաև* դատավորների գնահատման հանձնաժողովները». 5. 5-րդ մասի վերջում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. *«Նախկին դատավորը կամ իրավաբան գիտնականը կարող է առաջադրվել որպես գնահատման հանձնաժողովի անդամ Դատավորների ընդհանուր ժողովի որևէ անդամի կողմից առաջադրվելու եղանակով: Գնահատման հանձնաժողովի իրավաբան գիտնական անդամ կարող է առաջադրվել այն անձը, ով ունի գիտաուսումնական կազմակերպություններում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն 3 տարվա աշխատանքի փորձ:».* 6. 7-րդ մասի 1-ին նախադասությունում «3-րդ և 4-րդ» բառերը փոխարինել «3-րդ, 4-րդ և 4.1-րդ» բառերով,		1. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ

	«դատարանների» բառից հետո լրացնել «(գնահատման հանձնաժողովի դեպքում՝ նաև ըստ նախկին դատավորների և իրավաբան գիտնականների)» բառերով, 4. 7-րդ մասի 2-րդ նախադասությունում «դատավորների» բառից հետո լրացնել «(գնահատման հանձնաժողովի դեպքում՝ նաև նախկին դատավորների *և իրավաբան գիտնականների*)» բառերը:»: *5. 7-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Մեկ թեկնածու առաջադրվելու դեպքում նա համարվում է ընտրված ձայների կեսից ավելին ստանալու դեպքում».* 2. Անհրաժեշտ է սահմանել, որ Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովի անդամը չի կարող է միաժամանակ ընդգրկվել Դատավորների ընդհանուր ժողովի մեկ այլ հանձնաժողովի կազմում: 3. 4-րդ հոդվածով լրացվող 96.2-րդ հոդվածի 14-րդ մասը նախատեսել լրացվող 96.1-րդ հոդվածում՝ որպես առանձին մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «Դատական դեպարտամենտը յուրաքանչյուր տարի քանակական չափանիշներին *վերաբերող* անհրաժեշտ տվյալները ուղարկում է դատավորին և գնահատման հանձնաժողովին:»: Բացի այդ 96.1-րդ հոդվածի 3-րդ մասում «կազմակերպում է» բառերը փոխարինել «իրականացնում է» բառով: 4. 4-րդ հոդվածով լրացվող 96.2-րդ հոդվածի՝		

	1) 5-րդ մասի 3-րդ կետը «դատավարական» բառից հետո լրացնել «առանձին գործողությունների կատարման համար օրենքով սահմանված» բառերով, ինչպես նաև 5-րդ մասից հանել «առաջին ատյանի դատարանի» բառերը: 2) 7-րդ և 8-րդ մասերում «ներառվում» բառերը փոխարինել «հաշվարկվում» բառերով, 3) 12-րդ մասում «վերաքննիչ և վճռաբեկ դատարանի» բառերը հանել, 4) 14-րդ մասի երկրորդ պարբերությունը հանել: 5) 15-րդ մասում «գնահատման արդյունքները պետք է ունենան գերակայող նշանակություն» բառերը փոխարինել «պետք է առնվազն քսան տոկոսով գերակայեն քանակական չափանիշների նկատմամբ» բառերով: 5. Նախագծի 9-րդ հոդվածով լրացվող 153.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «ակտն օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող» բառերը փոխարինել «ակտը կայացնելուց հետո՝» բառերով:		